ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ

Նաիրի Զարյանին (Հայաստան Եղիազարյանին) գիտեմ 1920 թվականից: Նա և Գուրգեն Մահարին հաճախ, շատ հաճախ էին լինում մեր մանկատանը՝ հանդիպելու համար իրենց սիրած աղջիկներին: Մասնակցում էին մեր գրական, երաժշտական և պարային հանդեսներին: Նաիրին և Մահարին շատ մտերիմ ընկերներ էին, առանց մեկի մյուսին պատկերացնել չէր կարելի: Նրանց մտերմությունը սկսվել էր մանկատնից: Թե ինչ պայմաններում և երբ եմ անձամբ Նաիրու հետ ծանոթացել, չեմ հիշում, բայց կարծես թե ծնված օրվանից Նաիրու հետ ծանոթ եմ եղել:

Նաիրին միջահասակից բարձր, շագանակագույն մազերով, անկազմակերպ քայլվածքով, մշտապես պարզ ու կոկիկ հագնված, մի աչքը կիսափակ, ուրախ, մշտածիծաղ, ասող-խոսող, համակրելի մի երիտասարդ էր: Սիրված էր նաև իր ընկերության կողմից՝ իր միամիտ, դյուրահավատ և անմիջական բնավորության համար: Նաիրու մոտ, ինչպես ասում են, «մտածածը լեզվի ծերին էր»: Չուներ ոչ մի խորամանկություն, ուներ միամիտ անտակտություններ, որը զգալուց հետո անմիջապես մեղա էր գալիս: Նաիրին շուտ ոգևորվող, բռնկվող, բայց անմիջական էր: Պահի տակ եթե մեկն ասեր՝ Նաիրի՛, ես շատ քաղցած ու մերկ եմ, նա անմիջապես բերանի պատառը և վրայի շապիկը նրան կտար՝ առանց մտածելու, որ ինքը մերկ ու քաղցած կմնա:

Ալազանն ու Նորենցը, հաշվի առնելով նրա միամիտ ու անմիջական լինելը, մի օր շատ դաժանորեն նրա հոգու հետ խաղացին: «Ինտերնացիոնալ» ճաշարանում, որը գտնվում էր Կուլտուրայի տան դիմաց, նստած ճաշում էինք: Ներս մտավ Նաիրին: Մենք սկսեցինք արագ-արագ մանանեխ քսել հացին: Նաիրին այդ տեսնելով հարցրեց.

- Առանց ինձ այդ ի՞նչ համով բան եք ուտում:

- Շատ-շատ համով է, Նաիրի՛ ջան, - ասաց Ալազանը՝ ավելի հաստ շերտով մանանեխ հացին քսելով:

Նաիրին, այդ տեսնելով, մանանեխ քսեց հացին և արագությամբ կերավ: Այդ ժամանակ նրա աչքերից թափվող արցունքները խառնվեցին խեղդող հազին: Նա տանջվում էր, իսկ մենք ծիծաղում ու ծիծաղում էինք:

- Սպասե՛ք, խորամանկ աղվեսներ, մի օր էլ ես ձեզ քյալագի մեջ կգցեմ, - ասում էր Նաիրին՝ ծիծաղելով և արցունքները սրբելով:

- Մարո՛, դո՞ւ էլ... ես քեզանից չէի սպասում, որ կմիանաս այս անլուրջ տղաների անլուրջ արարքներին: Դու էլ ինձ դավաճանեցիր, հա՞. դե լավ...

Որքան Նաիրին միամիտ ու անկեղծ էր, այնքան Մահարին խորամանկ էր:

Մի օր մի խումբ գրողների հետ Աբովյան փողոցով զբոսնում էինք: Մեզ մո-

տեցավ Նաիրին: Մահարին, առանց մեզ հետ համաձայնեցնելու, Նաիրուն մի նոր փորձանքի բերեց ասելով.

- Նաիրի՛, գիտես, որ Զարիկդ մի բարձրահասակ և սիրուն երիտասարդի հետ հենց նոր անցավ մեր մոտով և ինձ էլ կանչեց ու ասաց Գուրգենն, Նաիրուն կասես, որ էլ իմ մասին չմտածի:

- Ճի՞շտ ես ասում, - ասաց Նաիրին այլայլված:

- Ճիշտ է, ճիշտ, - հաստատեցինք բոլորս:

Նաիրին հուզված, արագ քայլերով հեռացավ, իսկ Մահարին խորամանկ ծիծաղելով մեզ ասաց.

- Տղե՛րք, տեսաք՝ ոնց կռվացրի:

* * *

Մի օր Նաիրին Շիրվանզադեին, Ալազանին, Դերենիկ Դեմիրճյանին, Նորենցին և ինձ ճաշի հրավիրեց: Խաշը պատրաստված էր Նաիրու տիկնոջ՝ Սիրանուշի հմուտ ձեռքերով և խաշային բոլոր օրենքներով: Սխտորաբույր տաք խաշը դրվեց բոլորիս առաջ: Լավաշը բրդելուց, մատներով ուտելուց, մի-մի բաժակ օղի էլ խմելուց հետո սկսվեցին բաժակաճառերը: Նաիրին իր բաժակաճառում ասաց.

- Չնայած ես, Ալազանը և Նորենցը հաճախ ենք գրական որոշ հարցերի շուրջ կռվում՝ բայց թող միայն մեր տեսակետները կռվեն, իսկ մենք կշարունակենք մեր ընկերությունն ու բարեկամությունը:

Ինչպես առաջներում էլ նշել եմ, այն ժամանակներում տեսակետների տարաձայնությունները չէին խանգարում գրողների մտերմությանն ու ընկերությանը: Դիսպուտներում *(բանավեճ- խմբ.)* ամենախիստ խոսքերով իրար նախատում, ծաղրում էին, իսկ դիսպուտից հետո իրար թևանցուկ արած գնում էին «Ինտուրիստ», մի-մի բաժակ սուրճ խմում, նորից ու նորից ամեն մեկը աշխատում էր իր տեսակետն ամուր դիրքերի վրա դնել, հետո էլի իրար թևանցուկ փողոցում զբոսնում էին ու տուն գնում:

Նաիրին, չնայած իր ծախ տեսակետներին, ամենաակտիվ մասնակցությունն էր ունենում գրական բոլոր աշխատանքներում:

Նաիրին շուտ բռնկվող և շուտ ոգևորվող մի անձնավորություն էր: Ահա բնավորության այդ գծերին զոհ դարձան նրա կինը՝ Սիրանուշը, և երեք որդիները: Նա ամուսնացավ գրող Անժելա Ստեփանյանի հետ:

* * *

...Մի քանի խոսք Նաիրու մասին: Մարո ջան, ինչպես գիտես Վաղոն ու գուրգենը ինձնից հինգ օր առաջ էին եկել Մոսկվա: Նաիրին նրանց ընդունել էր շատ ջերմ, յուրաքանչյուրին տվել էր 400-ական ռուբլի, գնել էր մի-մի վերնաշապիկ (120 ռուբլիանոց), փողկապներ: Վաղոյի ասելով՝ Նաիրին նրանց վրա (մինչև իմ գալը) ծախսել էր 1500 ռուբլի:

- Չտեսնված ջերմ էր իմ ու Նաիրու հանդիպումը, - շարունակեց Ալազանը: -

Երկար ժամանակ ինձ գրկած համբուրում ու բաց չէր թողնում: Քանի որ ես հասա այն ժամանակ, երբ նա արդեն իր փողերը ծախսել էր և պատրաստվում էր ետ վերադառնալ, ուստի ինձ միայն երեք հարյուր ռուբլի տվեց և մի քանի անգամ հյուրասիրեց:

Այն ժամանակ, երբ նա Սիրվարդին ասել էր, թե գնում է Մոսկվա՝ Ալազանի գործով զբաղվելու, իսկապես որ այդպես էլ արել էր (այդ մասին մեզ նամակով հաղորդել էր Սիրվարդը՝ Ալազանի քույրը): Գալուն պես եղել է Ֆադեևի մոտ և խնդրել է նրա միջամտությունը: Ֆադեևը նրան ասել է, որ դիմում գրի իր անունով և մեզ բնութագրի: Նաիրին մի դիմում է գրել, որը Ֆադեևը մակագրել և ուղարկել է գլխավոր դատախազին. այսպիսով մեր գործը սկսել է տեղից շարժվել:

* * *

...Մեզ հրավիրեց նաև Նաիրի Զարյանը: Հրավիրված էին Գուրգեն Մահարին իր տիկնոջ հետ, Նորենցը, Ալազանն ու ես: Ընդունելությունը շատ ջերմ ու մտերմիկ էր, այնքան մտերմիկ, որ կարծես երեկվա մտերիմ ընկերները այսօր պատահաբար իրար մոտ էին հավաքվել: Այն նույն՝ 19 տարի առաջվա ջերմ ու ընկերական մթնոլորտն էր: Նույն սրամտությունները, նույն կատակները, նույն իրար ծեռ առնելը: Ինչպես վերը նշել եմ, Նաիրին անհիշաչար մարդ էր:

Թեև Գուրգենն ու Նաիրին մտերիմ ընկերներ էին, բայց բնավորության գծերով բոլորովին տարբեր մարդիկ էին: Կերուխումը սկսվեց: Բաժակաճառերում հիշեցին 1936-38 թվականների ահավոր օրերն ու արհավիրքները:

Նաիրին իր բաժակաճառում ասաց. «Մենք՝ գրողներս, հիմարաբար հավատացինք կուսակցության անունից խոսող, կուսակցական ապարատում նստած մի քանի բախտախնդիրների հորինած ստերին և զուր տեղը մեր ժողովներում ու մամուլում վարկաբեկեցինք ձեզ: Դա մենք հասկացանք այն ժամանակ, երբ մեր ճշմարիտ խոսքին այլևս ոչ ոք չէր հավատում: Չնայած ձեզ դատեցին ու աքսորեցին, բայց մենք ծեռքներս ծալած չնստեցինք: Երկու անգամ մեր ընդհանուր ժողովներում ձեր արդարացման հարցը դրել և համապատասխան որոշումներով վերադաս օրգաններին ենք ուղարկել, բայց ոչ մի դրական պատասխան չենք ստացել: Այդ բոլորը կարող է հաստատել Մարոն, որը եղել է մեր երկու դռնբաց ժողովներին և լսել է բոլոր գրողների ջերմ ու անկեղծ խոսքերը՝ բանտարկված գրողների հասցեին:

Ու միայն ես, իսկ վերջում բոլոր գրողներն էլ համոզվեցին, որ ձեր բանտարկության մեջ թշնամական, ջարդարարական մատ կար խառնված: Խմում եմ ձեր կենացը, բարով եք եկել, սիրելի՝ ընկերներ, ափսոս այն 19 տարիները, որ դուք անտեղի ձեր կյանքից կորցրեցիք»: Ու բաժակները շխկացնելով՝ խմեցինք իրար կենաց:

Ճաշից հետո, Նաիրու հյուրընկալ ընտանիքին մնաս բարով ասելով, փողոց դուրս եկանք զբոսնելու և թարմանալու: Ալազանն ասաց.

- Հիշո՞ւմ եք, մեր վերադարձի օրերին գրողները խումբ-խումբ մոտենում էին մեզ և ասում, որ մեզ բանտ ու աքսոր ուղարկողները Նաիրի Զարյանն ու Հրաչյա Քոչարն են եղել: Միշտ մեզ վարկաբեկող ու նվաստացնող հոդվածներ են գրել մամուլում և դանոսներ *(գաղտնի ամբաստանություններ- խմբ.)* են տվել համապատասխան օրգաններին: Ի՞նչ դանոսների մասին է խոսքը, երբ նրանք մինչև օրս էլ չգիտեն մեր մեղադրանքի մասին:

Չնայած Ալազանն էլ, Նորենցն էլ այդ կարծիքին էին, բայց ընդհանուրի ճնշման տակ երկուսն էլ սկսեցին Նաիրու հետ չխոսել, անգամ չբարևել: Այդ դրությունը տեսնելով՝ ես միջամտեցի.

- Իսկ ինչո՞ւ միայն Նաիրուն ու Քոչարին: Այդ դեպքում բոլոր գրողներին էլ պետք է չբարևեք, բոլորն էլ ձեր մասին գրել ու խայտառակ ելույթներ են ունեցել իրենց ժողովներում: Ես ինքս իմ սեփական աչքերով եմ կարդացել նրանց հոդվածները: Փոխանակ ուրիշի խոսքերին հավատալու՝ գնացեք և կարդացեք 1936-38 թվականների մամուլը, հատկապես «Գրական թերթը», և դուք կհավատաք իմ խոսքերի ճշտությանը:

Նույն խորհուրդը ձեզ եմ տալիս, սիրելի՛ ընթերցող, որով դուք կհամոզվեք իմ հուշերի ճշմարտությանն ու անկեղծությանը:

Եթե սկզբում Նաիրին միամտաբար հավատացել է կուսակցության գլուխ կանգնած շառլատաններին (Ամատունի, Ակոպով, Մուղդուսի), Բերիայի կամակատարներին և մամուլում գրել է ի վնաս մեզ, ապա վերջում ոչ միայն Նաիրին, այլև բոլոր գրողներն էլ խորին համոզմամբ հավատացին, որ դուք թշնամիներ չեք և չեք էլ եղել, և շատ ափսոսացին ու ցավեցին, որ իզուր տեղը վարկաբեկել եք ձեզ:

Ես հիշում եմ, որ մի անգամ 1945 և ապա 1946 թվերին Գրողների միությունը ձեր արդարացման հարցը դրեց, հրաշալի որոշումներ ընդունեց, բայց ոչ մի դրական արդյունքի չհասավ:

1946 թվին առանձին-առանձին ինձ մոտ եկան Նաիրի Զարյանն ու Վահան Գրիգորյանը և ասացին, որ ես մի դիմում գրեմ Գրողների միությանը և խնդրեմ, որ Ալազանի գործերը վերանայեն: Ալազանի գործերի հետ մյուսների գործերն էլ կվերանայվեին: Մյուս օրը ես դիմումս տարա և հանձնեցի Նաիրի Զարյանին: Նա ինձ ասաց ժողովի օրն ու ժամը և խնդրեց, որ անպայման ներկա լինեմ:

Ժողովը բացելով՝ Նաիրին ասաց.

- Ընկերնե՛ր, այսօրվա ժողովում քննելու ենք Մարոյի դիմումը՝ Ալազանի գործերի վերանայման կապակցությամբ: Այն չափով, որ Ալազանի գործը կապված է Վաղարշակ Նորենցի և Գուրգեն Մահարու գործերի հետ, ուստի պետք է խոսել նաև նրանց մասին և առաջ քաշել նաև նրանց արդարացման հարցը:

Ելույթներ ունեցան համարյա բոլոր գրողները և ամենաջերմ, ամենահուզիչ խոսքերն ասացին ձեր հասցեին և մի հրաշալի դիմումով խնդրեցին կառավարությանը, որ ձեզ արդարացնեն և ազատ արձակեն կալանքից:

Ձեր բացակայության ժամանակ ինձ հետ խոսել, ձեզ համար տանջվել և իրենց խաբվածությունը զգացել են համարյա բոլոր գրողները, բոլոր հոդվածագիրները, որոնց թվում նաև Նաիրին ու Քոչարը: Դեռ ավելին՝ մի անգամ, չեմ հիշում ինչ գործի կապակցությամբ, Նաիրու մոտ գնացի: Այնտեղ էր նաև Հրաչյա Քոչարը: Նրանք երկար քո մասին հարց ու փորձ արեցին: Ինձ մոտ էր նաև քո նամակներից մեկը: Ես այն կարդացի, իսկ Նաիրին ու Քոչարը մանկան պես արտասվում էին: Եվ վերջապես, այդ Նաիրին չէ՞ր, որ իր հաց ու ջրով, երեք ամիս շարունակ Մոսկվայում նստած, զբաղվել էր ձեր արդարացման գործով: Իսկ ի՞նչ են արել իրենց հոդվածները Նաիրու վզին փաթաթող մյուս գրողները: Նաիրին գոնե քաջություն ունեցավ և ընդունեց իր սխալները, իսկ նրանք զբաղված են իրենց հանցանքը սրա-նրա վզին բարդելով: Ես Նաիրու երդվյալ պաշտպաններից չեմ, բայց ուզում եմ, որ դուք ճշմարտությունն իմանաք:

- Ճիշտ է, - ասաց Ալազանը, - զինվորական կոլեգիային առաջին փայլուն խոսքը մեր մասին գրել է Նաիրին: Եվ վերջապես, մեկ ամիս շարունակ Նաիրին իր միջոցներով ոչ միայն մեզ կերակրեց, այլև ոտից գլուխ հագցրեց, վերջում էլ յուրաքանչյուրիս 100-ական ռուբլի տվեց:

- Նաիրու ընկերասիրությունը ոչ ոք չի ժխտում, բայց եթե այդ խայտառակ հոդվածը չգրեր, ավելի լավ կլիներ, - ասաց Վաղարշակ Նորենցը:

- Չէ՛, Վաղո՛ջան, մենք գրքի միայն մի երեսն ենք կարդում, - ասաց Ալազանը,- այն ժամանակ գրական, քաղաքական մթնոլորտը այնքան շիկացած էր, որ եթե մեզ չբանտարկեին ընդհանուր ճնշման տակ, գուցե մենք էլ այդպես վարվեինք:

- Դե լսե՛ք, մի զարմանալի դեպքի մասին պատմեմ, - ասացի ես, - դուք ինձանից լավ գիտեք Ստեփան Զորյանի չափված ու ձևված բնավորության մասին: Մի օր բժշկական ինստիտուտ գնալիս հանդիպեցի նրան: Նա ինձ բարևելուց հետո ձեր մասին հարց ու փորձ արեց և վրդովված պատմեց հետևյալը. «Մի օր «Խորհրդային Հայաստան» թերթից ինձ առաջարկեցին բանտարկված գրողների մասին իմ խոսքը ասել: Ես գրեցի այնպես, ինչպես գիտեի տղաներին, այսինքն՝ ոչ մի վատ բան չէի գրել նրանց հասցեին: Նրանք իմ հոդվածը ամբողջովին շուռ էին տվել հօգուտ իրենց, և առանց ինձ հետ համաձայնեցնելու՝ տպագրել: Երբ ես թերթը կարդացի, վրդովված խմբագրություն գնացի և այդ կեղծիքի դեմ բողոքեցի, բայց ինձ ոչ ոք չլսեց»:

Զորյանի հոդվածը ես ինքս կարդացել և զարմացել էի: Ահա թե ընդհանուրի ճնշման տակ ինչպես էին կեղծել Զորյանի գրավոր խոսքը: Եվ վերջապես դուք շատ լավ գիտեք ձեր շինծու և կեղծ մեղադրանքի մասին (Բերիային տեռորի են-

թարկել): Ես հավատացած եմ՝ մինչև օրս ոչ մի գրող ոչինչ չգիտի ձեր մեղադրանքի մասին, էլ ինչ խոսք կարող է լինել գրողների՝ ձեզ վրա ցուցմունք տալու մասին: Այդ բոլորը Նաիրուն չսիրող գրողների խոսքերն են, ուրիշ ոչինչ: Միակ գրողները, որոնք ինձ հանդիպելիս բարևում էին և ձեր մասին հարց ու փորձ անում, Նաիրին էր, Ստ. Զորյանը, Արշալույս Բաբայանը, Հրաչյա Հովհաննիսյանն ու Վահան Գրիգորյանը: Մնացածն ինձ տեսնելիս ճամփան թեքում և տասը կիլոմետր հեռու էին փախչում:

Գիշերվա ժամը երկուսին մեր շիկացած վեճը ավարտվեց, և մենք տուն գնացինք:

* * *

Մյուս օրը Ալազանը գնաց Գրողների միության գրադարանը, վերցրեց այդ տարիների «Գրական թերթ»-ի համարները և կարդաց իրենց մասին գրված հոդվածները: Տուն մտնելով՝ շատ հուզված ասաց. «Այո՛, բալի՛կ ջան, դու շատ ճիշտ ես, չգտա մի գրող, որ մեզ հայհոյած չլիներ. միայն մի մասը ավելի բարեխիղճ է հայհոյել, մյուսներն ավելի անբարեխիղճ»:

Հաջորդ օրը մեզ մոտ եկավ Նորենցը: Ալազանը նրան շատ հուզված ասաց.

- Վաղո՛ ջան, գնա՛, գնա՛ դու էլ կարդա, տես, թե ինչեր են գրել մեր մասին: Իմ մասին օրինակ՝ Խանջյանի ձեռքի թաշկինակ, քծնող, դաշնակցական սրիկա, տրոցկիստ, նացիոնալիստ, և ինչ փաստերի հիման վրա են այդ խոսքերը գրել՝ չեմ հասկանում:

Այդքանից հետո նրանք եկան այն եզրակացության, որ միայն Նաիրին չէր զրպարտչական հոդվածներ գրել: Ի տարբերություն մյուսների՝ Նաիրին գոնե իրենց արդարացման համար երկարատև ճիգ ու ջանք էր գործադրել: